

մեծ մտքի վերայ զարմանալ, բայց նրան թողնել, որ մեռած մնայ, քանի որ մենք կարող ենք կեանքը վնասել այնտեղ, ուր գտնել կարելի է, այնտեղ ուր մարդկային հոգու և իւր կենդանի Աստուծոյ պատմութիւնը կայ:

Երաւանի սահկաւազ



ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՌԻՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Դասական լեզուների ուսուցումը քեմ. Հոգ. դպրանոցներում: Ռուսաց թեմ. Հոգևոր դպրանոցներում յունարէն և լատինարէն լեզուների ուսուցումը բաւական ընդարձակ տեղ է ընդունւում. այդ լեզուների դաստաւանդման գլխաւոր նպատակն այն է եղել, որ ուսանողները միջոց ունենան Աստուածաշունչ ս. Գիրքը լաւ հասկանալու, նախնի ս. հարց դրուածքները կարգալու և աստուածաբանական բարձրագոյն կրթութիւն ձեռք բերելու: Բայց դժբախտաբար մինչև այժմ դոքա զգալի օգուտ չեն տուել, շնայելով որ աշակերտները 9—10 տարի պարապում են այդ երկու լեզուներով: Այս հանգամանքի վերայ առանձին ուշադրութիւն են դարձրել Հոգևոր դպրանոցներում աւարտած նախկին սաներից երկուորը, որոնք առանձին յօդուածներով «Ս. Պետ. Վեգ.» թերթում ցոյց են տալիս դասական լեզուների աւելորդ լինելը թեմ. դպրանոցներում: Դոցանից Գ. Վ. ի կարծիքով զիւղական քահանայի համար կարևոր չէ իմանալ յունարէնը և լատինարէնը, քանի որ ս. հարց դրուածքները արդէն վաղուց թարգմանուած են ռուսերէն լեզուով և նրանց ընդհանր կարգալու նպատակով 9 տարի յունարէնի և 10 տարի լատինարէնի վերայ գործադրելը միմիայն ժամանակի կորուստ է և ոչ մի միտք չունի. մանաւանդ դաստաւանդութիւնն այնպէս է կատարուում, որ ուսածը ընդունողին դուր է կորչում և աւարտելուց յետոյ նոյն իսկ ոմանք ամբողջը մոռանում են և կարգալ անգամ չեն կարողանում:

Միւս ընկերը լրացնելով Գ. Կ.-ի յօդուածի միտքը ասում է, թէ գործնական աստուածաբանութիւն ուսումնասիրելու համար յուն. և լատ. լեզուները ո՛չ մի նշանակութիւն չունին (թէ և տեղական աստուածաբանութեան համար մասամբ կարեւոր է համարում)։ Ընդհակառակը Հոգ. ճեմարանի ուսանողներն այն համոզման են եղել, որ աստուածաբանական առարկաները լատ. և հիմնաւոր սովորելու համար կարեւոր է իմանալ գերմաներէն լեզուն և ոչ դասականը. մինչև իսկ սեմինարիական և աւարտական շաբադբութիւնները գրեւում են դիւստորապէս գերմաներէն գրքերի օգնութեամբ (վերջերս նաև անգլիերէն) ուր կարելի է գտնել և՛ ընդարձակ քննադատութիւն յուն. և լատ. լեզուներով գրած ընդդրերի, և՛ լեզուաբանական մանրամասն մեկնութիւն)։ այդ լեզուներով գրուած գրքերի համեմատութեամբ մեր ամեն մե սեպհական խորհրդածութիւնը կը լինի միմիայն մանկական երևակայութեան արդիւնք։ Ի վերջոյ նա այն կարծիքն է յայտնում, թէ Ռուսաց ճեմարանների համար աստուածաբանական ինքնուրոյն քննադատութեան ժամանակը դեռ չէ հասել, ուստի և ներկայ պայմաններում դասական լեզուներն աւելորդ տեղ են բռնում Հոգ. դպրանոցներում։

Պրոֆ. Մոզեստովը սորա հակառակ պաշտպանելով յուն. և լատ. լեզուները ուսուցումը պատասխանում է, թէ դրա հարկաւոր են ոչ թէ ս. հարց գրուածքների ընդիրը կարգալու համար, այլ որ օգնէին աստուածաբանական բարձրագոյն կրթութիւն և զարգացում ստանալու՝ ընդհ. քրիստոնէական եկեղեցու լեզուները լինելով։ Աստուածաբանութիւն սովորողի համար խիտ կարեւոր է հասկանալ յունարէն լեզուով աւետարանը և ուղղափառ ու կաթողիկէ եկեղեցիների պաշտամունքի մէջ գործածուող տեքմիկները. ուրիշ բան է որ այդ լեզուների ուսուցումը ներկայումս բաւարար չէ և պիտի բարեփոխել։ Ճիշտ է, գերմանացիները առաջնորդող դեր ունին գիտութեանց մէջ, բայց դորանց չի հետևում, թէ մենք ևս միայն պիտի երևանք, և ոչ թէ իսկապէս լինենք ուսումնական Բացի դորանց նոքա (դոնէ նրանց աստուածաբանները) լատ. տեղեակ չեն ս. Գրքի ուղեւորներէն լեզուով թարգմանութեանը, իսկ այդ թարգմանութիւնը լի է քերականական անճշտութիւններով և յաճախ կազում է լեզուի կողմից, անհասկանալի լինում. ուստի հարկաւոր է լատ. ծանօթութիւն յուն. և լատ. ընդիրներին այդ անճշտութիւններն ուղղելու համար։ — Այս առթիւ Իերк. Вест. թերթն ասում է, թէ չի կարելի ի հարկէ այդ լեզուները իսպառ վերացնել Հոգ. դպրոցներից, քանի որ աստուածաբանական գիտութեան աղբիւրը դասական լեզուներով է պահուած, և ոչ մի թարգմանութիւն չի կարող դո՛սա-

ցնեի աստուածաբանութեամբ ինքնուրոյն պարապողներին. ուստի հարեւոր է քարեփոխել դասաւանդութեան եղանակը և այնպէս դնել դործը որ աստուած օգուտը ստացուի: Յաւալի է նաև այն երեւոյթը, որ Հոգ. դպրանոցներն աւարտած ուսները անտարբեր են դէպի աստուածաբանական գիտութիւնները և այն անմիջիթարական համոզումն ունին, թէ Ռուսաց համար գեռ վաղ է աստուածաբանական ինքնուրոյն գիտութիւն ունենալը: Վերոյիշեալ յօդուածների հեղինակներին նա համարում է այդպիսի ուսանողներից:

—Մարեմասիկան եւ բնագիտութիւնը Ռուսաց Հոգ. բեմ. դպրանոցներում: Ս. Պետ. Վեդ. թերթը մի առանձին յօդուածով պարզում է այն տխուր վիճակը, որի մէջ գտնուում են մաթեմատիկան և բնագիտութիւնը Հոգևոր և թեմ. դպրոցներում: Թէև այդ առարկաները մտցրած են ծրագրի մէջ, բայց նոցա աւանդումը շատ ողորմելի դրութեան է հասցրած, շնորհիւ այն հանգամանքի, որ լաւ դասատուները թողնում են Հոգ. դպրանոցները և ծառայում են Լուսաւորութեան կամ Ն. և մտից նախարարութեան ներքոյ գտնուող դպրանոցներում. այնպէս որ 1901 թուին 20 Հոգևոր դպրանոցներում մաթեմատիկայի և բնագիտական առարկաների դասատուներ չկային. դորա համար էլ կարեւոր համարուեց Հոգ. ճեմարանը աւարտող ուսանողներին թոյլ տալ այդ առարկաներն աւանդելու: Եօդուածագիրը վերջին քայլը անպատեհ է համարում այն տեսակէտից, որ Հոգ. ճեմարանում չեն աւանդում ոչ բնագիտութիւն և ոչ մաթեմատիկա, ուստի ճեմարան աւարտողները պիտեն միայն այնչափ, որչափ որ աւանդում են թեմ. Հոգ. դպրանոցներում, և նոցա գիտութեան չափը, այդ առարկաների նկատմամբ, աւելի քիչ է, քան թէ բնական ուս. դիմնադիտն և ուսուցչական ինստիտուտ աւարտողներինը, ուր վերոյիշեալ առարկաներն աւանդում են աւելի հիմնաւոր կերպով և լրիւ: Որպէս զի ուրեմն ճեմարան աւարտողները կարողանան աւանդել այդ առարկաները՝ պէտք է Հոգ. ճեմարանների ծրագիրը ընդարձակել և մաթեմատիկական ու բնագիտութիւնը պարտաւորեցուցիչ դարձնել այդպեղ: Այն ժամանակ ուսումը ճեմարանում կը լինէր կատարեալ, բազմակողմանի, իրականութեան մօտ և զրաւիչ երիտասարդութեան համար. և այնուհետև դժուար չէր լինի ճեմարանաւարաններին Նշանակել դասատու Հոգ. դպրանոցներում ու ներկայ անմիջիթար դրութեան առաջն առնել:

Սրբազան Անսոնիյի օրջաբերականը:—Վաղընի նահանգում այս ձմեռ տեղի ունեցած անկարգութիւններէ առթիւ սրբազան Անտոնիյը մի առանձին շրջաբերական է ուղղել այդ նահանգի հոգևորականութեան, որը իւր բովանդակութեամբ որոշ չափով վերաբերում է նաև բոլոր հոգևորականութեան: Թղթադիւղացին չունի իւր շրջանում հասկացող մարդ, որոնք կարողանային հեռու պահել իրան զանազան կատկածելի անձնաւորութիւններից և սուտ լուրերից, իսկ քահանաները ոչ միայն այդ չեն անում, այլ և տեղեակ չեն, թէ ինչ է կատարւում իրանց ծխի մէջ: դորանով հովուի ու իւր հօտի բարոյական կապը շատ թուլացել է: Նորին սրբաղնութիւնը այս հանգամանքը վերադրում է այն իրողութեան, որ քահանաները կտրուած են գիւղական հասարակ ժողովրդից և մօտ են միայն բարձր աշխարհիկ դատակարգին և նրա շահերին են ծառայում: իրանք անձնատուր են լինում աշխարհիկ կեանքին, կապալով հոգեր են վերցնում, անասնաբուծութեամբ են պարապում և ջուրթակի վրայ նուազել են սովորում: Երկտասարդ քահանաները խմորուած են զանազան դադափարներով և կիտալուտերական ու կիտակաթողիկ յարաբերութիւն ունին դէպի ուղղափառ եկեղեցին, բարձրից են նայում եկեղեցական ծիսակատարութեանց ու օրէնքների վերայ: Ներկայումս ժողովուրդը ասում է իւր հոգևորականութիւնը, թշնամաբար է վերաբերւում դէպի նա, շնորհիւ նորա անտարբերութեան և բռնած ընթացքին: Ուստի սրբազանը խրատում է նրանց, կրկին անգամ յիշեցնում է նրանց պարտականութիւնը, որ ծառայեն դադափարին և ժողովրդի հոգևոր պէտքերին նուիրուին, որ նրանց գիտութեան միակ աղբիւր պիտի լինին: Առտուածաշունչը, Ռսկեբերանը և Սուրբ հարց գրուածքները, ու այնպէս պիտի նուիրուին գործին, որ հերետիկոս շտուկիստներին, հրէաների և պատահական նիհիլիստների (սոնչականների) ո՛չ մի քարոզութիւնը ազդեցութիւն չունենայ գիւղական ժողովրդի վերայ: Այս առթիւ «Մոսկ. Վեդօմոստի» թերթը գովում է Նորին սրբաղնութեան շրջաբերականը և նորա առաւելութիւնն այն է համարում, որ նա հոգևորականներին դուտ հոգևոր գործի է առաջնորդում, վերջինիս կարծիքով հոգևորական նշանակութիւնը կորչում է այն ժամանակ, երբ նա թեթև վերաբերուելով իւր պաշտօնին, կեանքի արտաքին նիւթական կողմի վերայ է ուշ դարձնում՝ պարապում է գիւղատնտեսութեամբ, թշկուութեամբ և ուրիշ այլ պաշտօններով, մինչդեռ ժողովրդին հարկաւոր է դուտ հոգևորական անձն, անկախ որևէ այլ պաշտօնից:—Անդհակառակն «Եկեղ. Համբաւաբեր» շաբաթաթերթը աւելի գործնական տեսակէտից է նայում խնդրին և միակողմա-

նի է գտնուում վերոյիշեալ թերթի արտայայտած կարծիքը. նա առում է, որ շատ նեղ կը լինի այն որոշումը, որ արել է նորին սրբազնութիւնը հովուի համար, որ իւր թէ քահանայի ամբողջ գիտութիւնը պիտի սահմանափակուի Աստուածաշնչով, Ոսկեբերանով, Ս. հարց գրութեանը ու եկեղեցական ծիսակատարութեամբ, իսկ կեանքի գանազան գործերին մասնակցելը կարեւոր չէ:—Բայց քանի որ շրջաբերականի առիթ եղել է հոգևորականութեան անգորութիւնը գիւղական խառնակութիւնների առաջնառնելու, որոնք յառաջացել էին հոգաւիրութեան և նրանցից օգտուելու պայմաններից՝ պէտք է ենթադրել, որ նրա նպատակը չէ եղել սահմանափակելու գիւղական քահանաների պարտականութեան շրջանը, այլ շեշտելու հոգևորականութեան այդ մասում ունեցած թուլութիւնը:

—Սարսառով քաղաքում հասարակ ժողովրդի կրօնական—բարոյական պահանջներին դոհացում տալու գիտաւորութեամբ 1902 թ. ապրիլի 7-ին Գերմոգէն եպիսկոպոսի նախաձեռնութեամբ բացուել է մի «Թէյատուն—ճաշարան», որը իւր գործունէութեան եղանակով տարբերուում է մինչև այժմ եղածներից: Այս հաստատութեան նպատակն է նախ աղքատ դասակարգին մատակարարել աճան, բայց սննդաբար կերակուր, և ապա նրանց կրօնական—բարոյական զգացումը կրթել: Այս բարի գործը կարճ ժամանակուայ ընթացքում մեծ յաջողութիւն ունեցաւ, այնպէս որ հարիւր հազարաւոր աղքատ բանուորներ ստանում են շատ աճան (սխալ նոյն իսկ ձրի) կերակուր և ի սրտէ օրհնում են իրանց բարերարներին: Սկզբում շատ հոգևորականներ կասկածով էին վերաբերուում, թէ ի՞նչպէս կարելի է այդ միջոցով կրօնական—բարոյական զգացումը դարգացնել հասարակ դասակարգի մէջ: Բայց փորձը ցոյց է տալիս, որ այս միջոցը կարող է շատ բարեբար ազդեցութիւն ունենալ: Որոշուած են կարգեր և կան յաշմարտութիւններ, որոնցով համեստ ճաշի հետ սովորում են աղօթել բոլորն ի միասին: Շինուած է այստեղ մի ահագին լուսաւոր դահլիճ, որի բոլոր պատերը զարդարուած են բազմաթիւ պատկերներով. ծխելը արգելուած լինելով՝ օդը մնում է միշտ մաքուր և առողջարար. գինովցած մարդիկ չեն ընդունուում. պահք օրերը տրուում է պատուայ կերակուր. ունին նաև դրամֆոն՝ կրօնական բովանդակութիւն ունեցող պիէսներով: Կիւրակէ և տօն օրերը երեկոյեան տեղի է ունենում կրօնական—բարոյական զրուցատրութիւն հասարակ ժողովրդի հետ. զրուցատրութիւնը երեք տեսակի է ըստանաւ. ա) քրիստոնէական հրահանգութիւն, բ) որբազան պատմութիւն և գ) միսիոն: Քաղաքից երեք քահա-

նայ և թեմական միտինարը ընտրուած են գոցա քարողութեան համար: Նորա խօսում են պարզ, բոլորին մատչելի լեզուով, որից յետոյ տեղի է ունենում ընդհանուր աղօթք և երգեցողութիւն: Զանազան տօն օրերի ինքը Գերմոգէն եպօր դալիս է, կատարում է հանգիստաւոր ժամերգութիւն բոլոր աղօթողներին հետ միաորին: Յաճախ պատահում են յաճախորդների թուում և աղանդաւորներ, որոնք ուշադրութեամբ հետևում են եկեղեցական կեանքի այս արտաբանութիւնը: Մայիսի 19-ին թէյատուն—ճաշարանը վերակոչեցին «Աղօթատուն յանուն երից սրբոց», որի առթիւ Սրբ. Գերմոգէնը եկեղեցական փառահեղ հանդէս կատարեց և բացատրեց այդ հաստատութեան նշանակութիւնը: Մտադիր են ապագայում աւելի ընդարձակել և հիմնել դրադարան կրօնական բովանդակութիւն ունեցող գրքերով:

Գեղարուեստը Ռուսաստանում զրկուեց իւր մի փայլուն ներկայացուցիչից: Օգոստոսի 10-ին վախճանուեց Գ. Ի. Սեմի-րադսկին, որ ծագումով լեհացի էր և որ իւր գեղարուեստական հրաշալի նկարներով համաշխարհային հռչակ էր ստացել: Նորա նկարների մէջ ամենից շատ աչքի են ընկնում կրօնական բովանդակութիւն ունեցողները և նախնական կեանքից առնուածները: Նշանաւոր են օր. «Քրիստոս և մեղաւոր կինը», «Խորհրդաւոր ընթրիքը» (որ Մոսկուայի ս. Փրկիչ եկեղեցու սեղանի առաջադն է դարձարում, բայց դժբախտաբար խոնավութիւնից արդէն եղծուած է), «Քրիստոս Մարթայի և Մարիամի մօտ» և ուրիշ շատերը:

Օգոստոսի 15-ին Խարկովում, համալսարանի շինութեան մէջ, տեղի ունեցաւ հնագիտական ԺԲ. ժողովը: Ներկայ էին 100-ից աւելի օտարերկրեայ անդամներ և 60-ից աւելի զանազան հաստատութիւնների և ուսումնական ընկերութիւնների ներկայացուցիչներ: Ընդհանուր ժողովի նախագահ ընտրուեց կոմսուհի Պ. Ս. Ուվարովան: Նոյն ժամանակ բացուեց նաև հնագիտական ցուցահանդէս կազմուած ութ բաժանմունքից, ուր կային նախապատմական հնութիւններ, եկեղեցական պատմական հնութիւններ, հին տպագրուած գրքեր, ձեռագիրներ, աշխարհացոյց հին քարտէզներ, դրամներ և ազգագրական նիւթեր: Իրենց բազմութեամբ և ընդարձակութեամբ աչքի էին ընկնում եկեղ. պատմական հնութիւնները և ազգագրական նիւթերը: Յուցահանդէսի իրերը զետեղուած էին համալսարանի 11 ընդարձակ

դահլիճներում և խիստ մեծ հետաքրքրութիւն էին շարժում: Հետո՛ւ նորա զանազան բաժանմունքներից կը կազմուի հետ-
թեանց թանգարան՝ համալսարանին կից, և լոյս կընծայուի ցու-
ցահանդիսում եղած բոլոր առարկաների անուանացուցակը: 35
ապագորական թերթի վերայ:

ՅՈՒՆԱՅ ԵԿԵՂԵՅԻ.

Կ. Պոլսի Յունաց Իօաքիմ Գ. պատրիարքը նորերս
հրատարակել է չորս հոլուական թղթեր՝ յանուն իւր իրաւասու-
թեան տակ գտնուող հոգեւորականութեան: Ա. թղթով նա յոր-
դորում է հոգեւորականներին ջերմեւանդութեամբ քարոզել Աս-
տուծոյ խօսքը. Բ. -ով հրամայում է ամենայն ճշմարտութեամբ
պահպանել մկրտութեան, պատկի և թաղման շափաքերականնե-
րը. Գ. -ով խրախուսում է կրօնական և բարեգործական հասա-
տութիւններին՝ եկեղեցական փողերը խնայելու ապահով դրամա-
մատներում և օգտակար ձևով գործադրելու. Գ. -ով պատուի-
րում է տարախոխիկ հիւանդութեանց դէպքում պահպանել ա-
ռողջապահական բոլոր կանոնները, ուստի և արգելում է տա-
րախոխիկ հիւանդութեամբ մեռնողի ձեռքը կամ շրթունքները
համբուրել և կամ թէ վերցնել նրանց հագուստից ու իրեղէննե-
րից: Իօաքիմ պատրիարքը Ս. Սինօղի համաձայնութեամբ հիմնել
է երկու նոր աստուածաբանական դպրոց, իւրաքանչիւրը 50 ա-
շակերտի համար, որոնց ծախքը պիտի Ժողովուրի հոգեւորականնե-
րից և վանքերի հասոյթներից: Իսկ Ժողովրդի կրօնական կրթու-
թիւնը բարձրացնելու նպատակով օկոել են հրատարակել մի քա-
նի թերթեր, որ ընդհանուրին մատչելի յօդուածներով կրօնական
—բարոյական նիւթեր են տալիս: Երեսուդէմի Գամիան պատրի-
արքը հրամայել է այդ թերթերից մի քանիսը թարգմանել յու-
նարէնից արաբերէն և տարածել իւր իրաւասութեան ներքոյ
գտնուող Պողեստինի արաբ ընտկչութեան մէջ: Церк. Вѣстник
թերթը ողջունում է կրօնական—բարոյական այս գործունէու-
թիւնը ուղղափառ արեւելքում և այս դասը բերում է իբրեւ
հերքումն եղութաների տարածած և մինչև այժմ յամառութեամբ
եւրոպական մի քանի բարձր շրջաններում հաստատուած այն
թիւր կարծիքի թէ ուղղափառ արեւելքը «մեռած և անշարժ է»:

Հին Սերբիայում քանակական գազանութիւնները անպակաս են:
Պէշ քաղաքի մօտ գտնուող յայտնի Դեզանեան վանքը, որը հիմ-